# ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ-ՊԵԿ-ՄԱԽԾՁԲ-26/54-Ք

ք.Երևան «24» օգոստոսի 2026թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Դավիթ Մաթևոսյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Միրզախանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար վերապատրաստման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1140000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար )** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
| **«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»** | **ՀՀ ՊԵԿ** |
| **Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7** | **«Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ** |
| **ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **ՀՎՀՀ 00107399** |
| **900011054013** | **Հ/Հ 900018002585** |
| **02647057** | **Երևանի Ժիվ 1 ՏԳԲ** |
| **Դավիթ Մաթևոսյան** | **Ք. Երևան, Ահարոնյան 12/3** |
| | **Արուսյակ Միրզախանյան** |
| ------------------------- | ------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«24» օգոստոսի 2026թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՄԱԽԾՁԲ-26/54-Բ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Քանակը | Չափման միավոր | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Մատուցման ժամկետը և վայրը |
| 1 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն CPV 79631200/2 | **Թեմա՝ Արդյունավետության գնահատման ցուցանիշներ (KPI)**<br>• Արդյունավետության ցուցանիշների տեսակները և առանձնահատկությունները. KPI և OKR մեթոդների տարբերությունները<br>• KPI համակարգի ներդրումը, կիրառման մեխանիզմները.<br>• KPI-ը որպես աշխատանքային նպատակադրման և մոտիվացիայի գործիք:<br><br>Վերապատրաստման դասընթացի տևողությունը կազմում է 10 ժամ՝ 2 օր, որը պետք է կազմակերպվի 1 խմբի համար՝ ընդգրկելով առավելագույնը 15 աշխատակից: Դասընթացն անցկացվելու է աշխատանքային օրերին՝ ժամը 09:45-ից: Դասընթացի անցկացման տարածքը պետք է համալրված լինի դասավանդման համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով (համակարգիչ, սահիկաշարերի ցուցադրման համար էկրան, գրատախտակ): Դասընթացն իրականացվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը նախատեսում է փոքր ընդմիջում (սրճադադար՝ հյուրասիրությամբ) և մեծ ընդմիջում: Կազմակերպվելիք դասընթացի ժամանակացույցը Կատարողը համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Խմբում ընդգրկված մասնակիցների ցանկը (անուն, ազգանունը, ՀԾՀ, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն) Կատարողին տրամադրում է Պատվիրատուն: Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օրվա ժամը մինչև 18:00-ն ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով Պատվիրատուին է տրամադրում տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ մասնակիցների կողմից ստորագրված փաստաթղթի բնօրինակի արտատպված (սկանավորված) տարբերակը: Ընդ որում՝ Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օր ապահովում է, որ դասընթացին ներկա | 1 | դրամ | 285000 | 1. 2026 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում:<br>2. Երևան քաղաքում՝ ծառայությունը մատուցողի նշած հասցեում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մասնակիցները ստորագրեն այդ փաստաթուղթը յուրաքանչյուր օրվա առավոտյան և ավարտին՝ պարտադիր նշելով ժամը: Դասընթացի ավարտման օրը մասնակիցներին տրամադրվում են հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն են տալիս վերջիններիս շարադրելու իրենց կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ դասախոսի մասնագիտական պատրաստվածություն, նյութի մատուցման ձև ու որակ, դասընթացի կազմակերպչական աշխատանքների որակ, այլ հարակից հարցեր, դիտողություններ և առաջարկություններ: Հարցաթերթիկների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները յուրաքանչյուր խմբի դասընթացի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը տրամադրում է Պատվիրատուին՝ verapatrastum@petekamutner.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցնում է դասավանդման ենթակա յուրաքանչյուր թեմայում ընդգրկվող ուսուցման նյութերի բովանդակությունը և դրանց սլայդները:<br>Վերապատրաստումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունք-ները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված պահանջներով: Դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Թեստը ձևավորվում է համակարգում նախօրոք զետեղված թեստային առաջադրանքներից՝ պատահական ընտրությամբ:<br>Թեստավորման արդյունքների մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: | | | | |
| 2 | Աշխատակիցների վերապ | **Թեմա՝ Արհեստական բանականությունը (AI) և դրա կիրառումը**<br>• Արհեստական բանականության էությունը, տեսակները, գործիքները.<br>• Արհեստական բանականության ներդրման հնարավորությունները, | 1 | դրամ | 285000 | 2026 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում:<br>2. Երևան քաղաքում՝ ծառայությունը մատուցողի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ատ<br>րաստման<br>ծառայու<br>թյուն<br>CPV<br>7963120<br>0/3 | ռիսկերն ու մարտահրավերները.<br>• Արհեստական բանականության կիրառումը պետական համակարգում /փաստաթղթերի, հաշվետվությունների և վերլուծական նյութերի պատրաստման գործընթացներում/.<br>• ԱԲ որպես աշխատանքի արդյունավետության բարձրացման գործիք:<br><br>Վերապատրաստման դասընթացի տևողությունը կազմում է 10 ժամ՝ 2 օր, որը պետք է կազմակերպվի 1 խմբի համար՝ ընդգրկելով առավելագույնը 20 աշխատակից: Դասընթացն անցկացվելու է աշխատանքային օրերին՝ ժամը 09:45-ից: Դասընթացի անցկացման տարածքը պետք է համալրված լինի դասավանդման համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով (համակարգիչ, սահիկաշարերի ցուցադրման համար էկրան, գրատախտակ): Դասընթացն իրականացվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը նախատեսում է փոքր ընդմիջում (սրճադադար՝ հյուրասիրությամբ) և մեծ ընդմիջում: Կազմակերպվելիք դասընթացի ժամանակացույցը Կատարողը համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Խմբում ընդգրկված մասնակիցների ցանկը (անուն, ազգանունը, ՀԾՀ, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն) Կատարողին տրամադրում է Պատվիրատուն: Դասընթացի անցկացման յուրաքանչյուր օրվա ժամը մինչև 18:00-ն Կատարողը ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով Պատվիրատուին է տրամադրում տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ մասնակիցների կողմից ստորագրված փաստաթղթի բնօրինակի արտատպված (սկանավորված) տարբերակը: Ընդ որում՝ Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օր ապահովում է, որ դասընթացին ներկա մասնակիցները ստորագրեն այդ փաստաթուղթը յուրաքանչյուր օրվա առավոտյան և ավարտին՝ պարտադիր նշելով ժամը: Դասընթացի ավարտման օրը մասնակիցներին տրամադրվում են հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն են տալիս վերջիններիս շարադրելու իրենց կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ դասախոսի մասնագիտական պատրաստվածություն, նյութի մատուցման ձև ու որակ, դասընթացի կազմակերպչական աշխատանքների որակ, այլ հարակից հարցեր, դիտողություններ և առաջարկություններ: Հարցաթերթիկների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները յուրաքանչյուր խմբի դասընթացի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը տրամադրում է | | | | նշած հասցեում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցնում է դասավանդման ենթակա յուրաքանչյուր թեմայում ընդգրկվող ուսուցման նյութերի բովանդակությունը և դրանց սլայդները:<br>Վերապատրաստումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունք-ները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված պահանջներով: Դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Թեստը ձևավորվում է համակարգում նախօրոք զետեղված թեստային առաջադրանքներից՝ պատահական ընտրությամբ:<br>Թեստավորման արդյունքների մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: | | | | |
| 3 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն CPV 79631200/4 | **Թեմա՝ Խոսքի մշակույթ, պաշտոնական փաստաթղթերի լեզուն**<br>• Խոսքի կառուցում<br>• Պաշտոնական գրագրության ոճական և քերականական վերջին փոփոխությունները<br>• ԱԲ կիրառումը պաշտոնական գրագրության մեջ<br>Վերապատրաստման դասընթացի տևողությունը կազմում է 10 ժամ՝ 2 օր, որը պետք է կազմակերպվի 1 խմբի համար՝ ընդգրկելով առավելագույնը 15 աշխատակից: Դասընթացն անցկացվելու է աշխատանքային օրերին՝ ժամը 09:45-ից: Դասընթացի անցկացման տարածքը պետք է համալրված լինի դասավանդման համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով (համակարգիչ, սահիկաշարերի ցուցադրման համար էկրան, գրատախտակ): Դասընթացն իրականացվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը նախատեսում է փոքր | 1 | դրամ | 285000 | 2026 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում:<br>2. Երևան քաղաքում՝ ծառայությունը մատուցողի նշած հասցեում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընդմիջում (սրճադադար՝ հյուրասիրությամբ) և մեծ ընդմիջում: Կազմակերպվելիք դասընթացի ժամանակացույցը Կատարողը համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Խմբում ընգրկված մասնակիցների ցանկը (անուն, ազգանունը, ՀԾՀ, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն) Կատարողին տրամադրում է Պատվիրատուն: Դասընթացի անցկացման յուրաքանչյուր օրվա ժամը մինչև 18:00-ն Կատարողը ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով Պատվիրատուին է տրամադրում տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ մասնակիցների կողմից ստորագրված փաստաթղթի բնօրինակի արտատպված (սկանավորված) տարբերակը: Ընդ որում՝ Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օր ապահովում է, որ դասընթացին ներկա մասնակիցները ստորագրեն այդ փաստաթուղթը յուրաքանչյուր օրվա առավոտյան և ավարտին՝ պարտադիր նշելով ժամը: Դասընթացի ավարտման օրը մասնակիցներին տրամադրվում են հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն են տալիս վերջիններիս շարադրելու իրենց կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ դասախոսի մասնագիտական պատրաստվածություն, նյութի մատուցման ձև ու որակ, դասընթացի կազմակերպչական աշխատանքների որակ, այլ հարակից հարցեր, դիտողություններ և առաջարկություններ: Հարցաթերթիկների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները յուրաքանչյուր խմբի դասընթացի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը տրամադրում է Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցնում է դասավանդման ենթակա յուրաքանչյուր թեմայում ընդգրկվող ուսուցման նյութերի բովանդակությունը և դրանց սլայդները:<br>Վերապատրաստումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունք-ները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | պահանջներով: Դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Թեստը ձևավորվում է համակարգում նախօրոք զետեղված թեստային առաջադրանքներից՝ պատահական ընտրությամբ:<br>Թեստավորման արդյունքների մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: | | | | |
| 4 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն CPV 79631200/5 | **Թեմա՝ Վիճակագրական տվյալների մշակում և վարում մայքրոսոֆթ էքսել /MS Excel/ ծրագրով.**<br><br>• MS Excel ծրագրով աշխատելու ընդհանուր դրույթներ, վերլուծական գործիքներ ու ֆունկցիաներ.<br>• Էլեկտրոնային աղյուսակներ /տվյալների ստուգում, զտում, տեսակավորում, փնտրում, փոխարինում, կրկնությունների ջնջում/.<br>• Դիագրամների ներդրում.<br>• Word և Excel ծրագրերի կապակցում:<br><br>Վերապատրաստման դասընթացի տևողությունը կազմում է 10 ժամ՝ 2 օր, որը պետք է կազմակերպվի 1 խմբի համար՝ ընդգրկելով առավելագույնը 15 աշխատակից: Դասընթացն անցկացվելու է աշխատանքային օրերին՝ ժամը 09:45-ից: Դասընթացի անցկացման տարածքը պետք է համալրված լինի դասավանդման համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով (համակարգիչներ, սահիկաշարերի ցուցադրման համար էկրան, գրատախտակ): Դասընթացն իրականացվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների միջոցով: Դասընթացը նախատեսում է փոքր ընդմիջում (սրճադար՝ հյուրասիրությամբ) և մեծ ընդմիջում: Կազմակերպվելիք դասընթացի ժամանակացույցը Կատարողը համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Խմբում ընդգրկված մասնակիցների ցանկը (անուն, ազգանունը, ՀԾՀ, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն) Կատարողին տրամադրում է Պատվիրատուն: Դասընթացի անցկացման յուրաքանչյուր օրվա ժամը մինչև 18:00-ն Կատարողը ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով Պատվիրատուին է տրամադրում տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ | 1 | դրամ | 285000 | 1. 2026 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում:<br>2. Երևան քաղաքում՝ ծառայությունը մատուցողի նշած հասցեում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մասնակիցների կողմից ստորագրված փաստաթղթի բնօրինակի արտատպված (սկանավորված) տարբերակը: Ընդ որում՝ Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օր ապահովում է, որ դասընթացին ներկա մասնակիցները ստորագրեն այդ փաստաթուղթը յուրաքանչյուր օրվա առավոտյան և ավարտին՝ պարտադիր նշելով ժամը: Դասընթացի ավարտման օրը մասնակիցներին տրամադրվում են հարցաթերթիկներ, որոնք հնարավորություն են տալիս վերջիններիս շարադրելու իրենց կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ դասախոսի մասնագիտական պատրաստվածություն, նյութի մատուցման ձև ու որակ, դասընթացի կազմակերպչական աշխատանքների որակ, այլ հարակից հարցեր, դիտողություններ և առաջարկություններ: Հարցաթերթիկների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները յուրաքանչյուր խմբի դասընթացի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը տրամադրում է Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցնում է դասավանդման ենթակա յուրաքանչյուր թեմայում ընդգրկվող ուսուցման նյութերի բովանդակությունը և դրանց սլայդները:<br>Վերապատրաստումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունք-ները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված պահանջներով: Դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Թեստը ձևավորվում է համակարգում նախօրոք զետեղված թեստային առաջադրանքներից՝ պատահական ընտրությամբ:<br>Թեստավորման արդյունքների մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Պատվիրատուին՝ ***verapatrastum@petekamutner.am*** հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: | | | | |

**Այլ պայմաններ**

* Կատարողը պետք է պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտով ներկայացնի ծառայության մատուցման վայրը:
**Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 6-րդ ենթակետի գնման առարկան հանդիսանում է խորհրդատվական ծառայություն և նախաորակավորման ընթացակարգ չի կիրառվում:
*** Ծառայության առաջին մատուցումը չի կարող լինել ավելի շուտ, քան պայմանագիրը կնքելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Դավիթ Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ՊԵԿ
«Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ
ՀՎՀՀ 00107399
Հ/Հ 900018002585
Երևանի Թիվ 1 ՏԳԲ
Ք. Երևան, Ակարոնյան 12/3
Արտյոմ Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 24 » օգոստոսի 2026թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՄԱԽԾՁԲ-26/54-Բ ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության* | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 4233 | 79631200/2 | աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ 1 | | | | | | | | | | 285000 | 285000 | 285000 | **285000** |
| 2 | 4233 | 79631200/3 | աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ 2 | | | | | | | | | | 285000 | 285000 | 285000 | **285000** |
| 3 | 4233 | 79631200/4 | աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ 3 | | | | | | | | | | 285000 | 285000 | 285000 | **285000** |
| 4 | 4233 | 79631200/5 | աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ 4 | | | | | | | | | | 285000 | 285000 | 285000 | **285000** |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» | ՀՀ ՊԵԿ |
| Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7 | «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ |
| ՖՆ աշխատակազմի գործառնական | ՀՎՀՀ 00107399 |
| վարչություն | Հ/Հ 900018002585 |
| 900011054013 | Երևանի Թիվ 1 ՏԳԲ |
| 02647057 | Ք. Երևան, Անդրանիկի 12/3 |
| Դավիթ Մաթևոսյան | Արտյոմ Միրզախանյան |
| ____________________ /ստորագրություն/ | ____________________ /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված 3*
*«      » օգոստոսի2026թ. կնքված*
*ՀՀ-ՊԵԿ-ՄԱԽԾՁԲ-26/54-Ք ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «                    » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«          »օգոստոսի 2026թ. կնքված*
*ՀՀ-ՊԵԿ-ՄԱԽԾՁԲ-26/54-Բ ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

*Հավելված N 4*

*«        » օգոստոսի 2026  թ. կնքված*

*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________________ հայտնում է, որ .

ֆինանսական գործակալի անվանումը

1. _________________________-ի և ____________________-ի միջև «--»   20 թ. կնքված

պատվիրատուի անվանումը   կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի

կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________   ____________

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20 թ.